

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ՝ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՈՐ ՆԱԽԱԳԱՐ, ՆՈՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, վաղը՝ հոկտեմբերի 27-ին, Վրաստանի բնակիչները նորանկախ պետականության պատմության մեջ վեցերորդ անգամ, իրենց սահմանադրությամբ վերապահված իրավունքի կիրարկմամբ կընտրեն երկրի չորրորդ նախագահին:

Ինչպես արդեն հաղորդել ենք, ընտրություններին իրենց թեկնածություններն են առաջադրել տարբեր թեքվածության կուսակցությունների եւ նա-

խածեռնող խմբերի 23 թեկնածուներ, որոնցից երեքը կին են (եւս մի էական տարբերություն): Թեպետ, ամենայն հավանականությամբ, հիմնական պայքարը կծավալվի երեք թեկնածուների միջեւ: Խոսքը վերաբերում է (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎԱՂԸ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ, ՎՐԱՍԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՕՐԵ Է: ՄԱՍՆԱԿՅԵՆՔ ԵՎ ԸՆՏՐԵՆՔ ԱՐԺԱՆԱՎՈՐԻՆ

ՎՐԱՍԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎՐԱՍԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոկտեմբերի 23-ին Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձե՛ն աշխատանքային հանդիպում ունեցավ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանի հետ:

Հանդիպմանը Հայաստանի դեսպանը նշեց, որ կրթության եւ գիտության ոլորտում վրաց-հայկական համագործակցությունը երկկողմ հարաբերությունների կարեւոր ուղղություններից է, եւ երկու երկրների համապատասխան գերատեսչությունների միջեւ առկա է համագործակցության բարձր մակարդակ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին կրթության եւ գիտության ոլորտներում երկկողմ հարաբերությունների հետագա խորացման, Վրաստանում գործող հայկական դպրոցների, հայոց լեզվի դասավանդման, հայալեզու դպրոցների համար կադրերի պատրաստման հետ կապված հարցերի լայն շրջանակ:



ԿԸՅ-Ն ՀՍՏԱԿԵՑՐԵՑ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ



Վրաստանում հոկտեմբերի 27-ին անցկացվելիք նախագահական ընտրություններին կմասնակցի 3 537 719 ընտրող:

Աբխազիայի եւ Ցիխնվալիի տարածաշրջանի, Վրաստանի իրավասությունից դուրս գտնվող տարածքների բնակիչները: ԿԸՅ-ի տվյալներով, արտասահմանում գրանցվել է Վրաստանի 48,458 քաղաքացի, որոնք էլ արտասահմանում բացված հատուկ 52 ընտրատեղամասերում մասնակցել են ընտրություններին: Ռուսաստանում բնակվող Վրաստանի քաղաքացիները նախագահական ընտրություններին մասնակցել չեն կարող, քանի որ այդ երկրի հետ դիվանագիտական հարաբերությունները խզված են, եւ այդ երկրի տարածքում ընտրատեղամասեր չեն բացվելու:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԲԻԶԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԴԱՇՏՈՆԱԿԱԼՈՒՄԻՑ ՄԵՎ ՇԱԲԱԹ ՀԵՏՈ, ԵՍ ԿԹՈՂՆԵՄ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԴԱՇՏՈՆԸ»

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին մտադիր է պաշտոնաթող լինել նոր նախագահի պաշտոնակալությունից մեկ շաբաթ հետո, մինչեւ նոյեմբերի 24-ը:

«Նախագահի պաշտոնակալությունից մեկ շաբաթ հետո, մինչեւ նոյեմբերի 24-ը, ես կթողնեմ վարչապետի պաշտոնը»,- հայտարարեց Իվանիշվիլին «Ֆրանսպրես» գործակալությանը տված հարցազրույցում: Նա հայտարարեց նաեւ, որ, հավանաբար, նախագահական ընտրությունների արդեն առաջին տուրում կհաղթի կառավարող «Վրասական երազանք» կուլիցիայից թեկնածու Գիորգի Մարգվելաշվիլին:



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ



ԸՆԴՈՒՆՎԵՑ ԲԱՆԱՉԵՎ ՎՐԱՍԱՆԻ ՄԱՍԻՆ

Եվրախորհրդարանն ընդունել է բանաձեւ, որտեղ խոսվում է Վրաստանի եւ Եվրամիության հարաբերությունների մասին:

մշակված բանաձեւում ներառված է գրանցում, որը վերաբերում է Վանո Մերաբիշվիլուն, ինչը բանավեճի առարկա է դարձել Վրաստանի խորհրդարանական մեծամասնության եւ փոքրամասնության միջեւ: Վրաստանի կառավարությունը ողջունել է Եվրամիության հետ ասոցիացիայի պայմանագրի ձեւակերպմանը: Հայտնի է նաեւ, որ արտաքին կապերի կոմիտեի կողմից

ազման պայմանագրի աջակցությանն ուղղված Եվրախորհրդարանի բանաձեւը, որտեղ ընդգծված են «Արեւելյան գործընկերության» անդամ երկրների նկատմամբ Եվրամիության պարտավորությունները եւ Վրաստանի եվրաինտեգրման միտումը:

Վրաստանի կառավարության կողմից տարածած հայտարարության մեջ նշված է, որ Վիլնյուսի գագաթաժողովից առաջ ընդունված այդ բանաձեւը հանդիսանում է ասոցիացիայի պայմանագրի հարցով Վրաստանին ուղղված պահանջների բավարարման վկայություն եւ մատնանշում է Եվրախորհրդարանի աջակցությունն առաջիկա գագաթաժողովում ասոցիացիայի մասին պայմանագրի ընդունման հարցում:

ԳՈՐԾԱԴԻՐ-ՕՐԵՆՍԴԻՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՆԿԱՆ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

ՀԵՆՁԵԼ ՄԿՈՅԱՆԸ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՀԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐԸ



Հոկտեմբերի 19-ին Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հանդիպում ունեցավ Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավորների հետ:

Պատգամավորների նախաձեռնությամբ կայացած հանդիպմանը, ինչպես մեզ տեղեկացրեց խորհրդարանի «Անկուսակցական անկախ մեծամասնականներ» խմբակցության անդամ, Նինոսմինդայից մեծամասնական պատգամավոր Հենկ Մկոյանը, խոսվել է երկրամասերին անհանգստացնող հիմնախնդիրների մասին: Մասնավորապես, նա Բիձինա Իվանիշվիլուն է ներկայացրել իր շրջանի եւ երկրամասի հիմնախնդիրները: (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԲԱՅՎԵՑ ՄԻՔԱՅԵԼ ԱՐԱՄՅԱՆՑԻ ՀՈՒՇԱՍԽՏԱԿԸ

Վրաստանում Հայաստանի դեսպանության նախաձեռնությամբ եւ Թբիլիսիի քաղաքապետարանի աջակցությամբ, հոկտեմբերի 24-ին Թբիլիսիի կենտրոնի, Սոլոլակի քաղաքային Մաչաբեթու փողոցում անցկացվեց մեծ բարերար եւ գործարար Միքայել Արամյանի հուշատախտակի բացման արարողությունը:



Միջոցառման բացմանը Վրաստանում Հայաստանի դեսպան Հովհաննես Մանուկյանը, մասնավորապես, նշեց. «Թիֆլիսյան հասարակությունը եւ քաղաքային իշխանությունները հավուր պատշաճի գնահատեցին նրա բարեգործությունն ու վաստակը՝ Միքայել Արամյանի շնորհիվ Թիֆլիսի պատվավոր քաղաքացու կոչում, որն այդ ժամանակներում դժվար վաստակվող, իր մեջ մեծ պատասխանատվություն ունեցող կոչում էր:»

(Շարունակությունը՝ 8-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ԷԴՎԱՐԳ ՄԻԼԻՏՈՆՅԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՆ

Հայաստանի գրողների միության անդամները հոկտեմբերի 20-ին կայացած համագումարում ընտրեցին նոր նախագահ:



Այս պաշտոնի համար իրենց թեկնածությունը նախապես առաջադրել էին միության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Էդվարդ Միլիտոնյանը, գրողներ Հովիկ Հովեյանը եւ Դավիթ Սարգսյանը: Հավաքի ընթացքում միության անդամներն առաջադրեցին նաեւ Վլադիմիր Հայրապետյանի եւ Ռոմիկ Սարգսյանի թեկնածությունը:

Հայաստանի գրողների միությունը ստեղծվել է 1934-ի օգոստոսին: 1946 թվականի սեպտեմբերին տեղի է ունեցել Հայաստանի գրողների միության 2-րդ համագումարը, վարչության նախագահ է ընտրվել Ավետիք Իսահանյանը: Այնուհետեւ միությունը ղեկավարել են Էդվարդ Թովիցյանը, Վարդգես Պետրոսյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Վահագն Դավթյանը, Ռազմիկ Դավթյանը, Հրանտ Մաթեոսյանը: Վերջին նախագահը՝ Լեւոն Անանյանը, սեպտեմբերի 2-ին անժամանակ հեռացավ կյանքից:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ


ՔՆՆԱՐԿՎՈՒՄ Է ԱՊԱԳԱ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 25-ին Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլու և խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու մասնակցությամբ «Վրացական երազանք» կուլիցիայի կենտրոնակայանում անցկացվեց քաղխորհրդի նիստը:

Տարածված տեղեկատվության համաձայն, կուլիցիայում խորհրդատվություններ են անցկացվում ապագա վարչապետի թեկնածուության շուրջ: Քաղխորհրդի նիստը անցկացվում է փակ

ծեռաչափով և օրակարգը հայտնի չէ: Նշենք, որ Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին հայտարարել է, որ իր իրավահաջորդի անունը իրապարակելու է հաջորդ շաբաթ: Իվանիշվիլու խոս-

քերով՝ նոր վարչապետը կլինի ավելի արդյունավետ, քան ինքն է: Ընդգծել է նաև, որ նոր վարչապետի անունը կիրապարակի երեքշաբթի կամ չորեքշաբթի: Ընդ որում, Իվանիշվիլին չի բացառում, որ այդ պաշտոնը կարող է զբաղեցնել Վրաստանի էկոնոմիկայի նախարար Գիրգի Կվիրիկաշվիլին, ով ծանոթ է տնտեսական ոլորտի հետ:



ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՅՈՒՄԵՆԱԿԱՆ ԿՈՆԳՐԱՎՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի Վոլգոգրադ քաղաքում ուղեւորատար ավտոբուսում պայթուցիկ է պայթեցվել, ինչի արդյունքում, նախնական տվյալների համաձայն, զոհվել է 6 մարդ, վիրավորվել 33-ը, 8 վիրավոր գտնվում են վերականգնման փուլում:

Դեպքի վայրում հայտնաբերվել են մահապարտ-ահաբեկչու ճարտարագիտական «Սեյ ալիմ» անունով հայտնի 31-ամյա Նախագահ Ասիալովան էր, որը ահաբեկչությունը կազմակերպել էր ամուսնու, 21-ամյա Դմիտրի Սոկոլովի հետ:

Իրավապահները հաղորդում են, որ գործի է դրվել ձեռքի նռնակ, եւս մեկը հաջողվել է վնասագործել:

Տեղի ունեցածի կապակցությամբ Վոլգոգրադ քաղաքում եռօրյա սուգ էր հայտարարվել:

ԻՐԱՆ ՀԱՄԱՆԵՐՈՒՄ Ե ՀԱՅՏԱՐԱՐԿԵԼ

Իրանի գերագույն ղեկավար և հոգեւոր առաջնորդ, այսօրվա Ալի Խամենեյին, Կուրբան Բայրամի (Չոհաբերության տոն) և Գադիր Խուսեյնի (հոկտեմբերի 24) կապակցությամբ համաներում է հայտարարել: Համաներումն առնչվել է 1241 դատապարտյալի: Նրանց թվում ընդգրկվել են քաղաքատարկյալներ, ինչպես նաև ռազմական հանցանքների համար դատապարտված անձինք: Համաներման մասին դիմումով Ալի Խամենեյին դիմել է Իրանի դատական համակարգի ղեկավար Սադիգ Ամոլի Լարիջանին:

ԱՄՆ ԳԱՐՏՆԱԼՍԵԼ ԵՆ ԱՇԽԱՐՀԻ 35 ԵՐԿՐՆԵՐԻ ՂԵԿՎԱՐՆԵՐԻ ՀԵՈՒՄՈՍՆԵՐԸ

Ամենայն հավանականությամբ, մոտ ժամանակներում ամերիկացի քաղաքական գործիչները պետք է արդարանան բրիտանական Guardian թերթի հրատարակած նոր նյութերի պատճառով:

Պարզվել է, որ ամերիկյան հատուկ ծառայությունները գաղտնալսել են աշխարհի մի քանիստ 35 առաջնորդի հեռախոսները: 2006թ. փաստաթղթում նշվում է, որ ԱՄԳ-ն Սպիտակ տանը, Պետդեպի և Պենտագոնին կոչ է արել կիսվել իր կապերով: Պետությունների ղեկավարների հեռախոսահամարները հետախուզության է հանձնել մի պաշտոնյա, որի անունը չի հրապարակվում:

Անվանվում են նաև աշխարհի տարբեր պետությունների ղեկավարների անունները, որոնց հեռախոսները գաղտնալսել է ԱՄԳ-ն: Սպիտակ տանը հրաժարվել են մեկնաբանել վերջին բացահայտումը, ընդունելով, որ մինչ այդ էլ մի շարք պետությունների հետ (Ֆրանսիա և Գերմանիա) հարաբերություններում խնդիրներ էին առաջացել՝ ԱՄՆ-ի սահմաններից դուրս ապօրինի գաղտնալսման տվյալները բացահայտելու պատճառով:

ԳԵՐՄԱՆԻԱ ՆՈՐԲԵՐՏ ԼԱՄԵՐՏԸ ԿԵՐԸՆՏՐԿԵՑ ԲՈՒՆԴԵՍԹԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ

Ինչպես սպասվում էր, նոր, 18-րդ գումարման Բունդեսբազի նախագահ է վերընտրվել Նորբերտ Լամերտը, որը ներկայացնում է Քրիստոֆ-Գեյմոկրատական միությունը (ԲԴՄ), կուսակցություն, որը գլխավորում է ֆեդերալ կանցլեր Անգելա Մերկելը: Ընտրությունները տեղի են ունեցել նոր խորհրդարանի հիմնադիր նիստի շրջանակներում, խորհրդարան, որը ԳԶԴ-ում ձեռնարկվել է Բունդեսբազի սեպտեմբերի 22-ին անցկացված ընտրությունների արդյունքում:

64-ամյա Լամերտի օգտին, որը ԳԶԴ-ի բարձրագույն ներկայացուցչական մարմինը գլխավորում է 2005 թվականից, քվեարկել է պատգամավորների մեծամասնությունը:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Հոկտեմբերի 23-ին Վիլնյուսում կայանալիք (նոյեմբերի 28-29) գազաթափողովի առաջ, «Արևելյան գործընկերության» ծրագրով, Վրաստան, Ուկրաինա և Մոլդովա կատարելիք շրջապայության շրջանակներում, աշխատանքային այցով Թբիլիսի ժամանեցին Լեհաստանի արտաքին գործերի նախարար Ռադոսլավ Սիկորսկին և Շվեդիայի ԱԳՆ-ի ղեկավար Կառլ Բիլդտը:

Այցի շրջանակներում կայացավ Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլու և Ռադոսլավ Սիկորսկու և Կառլ Բիլդտի հետ: Հանդիպմանը քննարկվել են երկրի իրադրությունը, ե՛լ առաջիկա նախագահական ընտրությունները:

Հանդիպումից հետո Վրաստանի վարչապետը հայտարարեց, որ Լեհաստանն ու Շվեդիան Վրաստանին աջակցում են եվրաինտեգրման քաղաքականության իրականացման գործում: Միաժամանակ, վարչապետի խոսքերով, այդ այցը հերթական անգամ ընդգծում է «Արևելյան գործընկերություն» նախագծի վիթխարի նշանակությունը:

Իր հերթին, Վրաստանի ԱԳ նախարար Սայա Փանջիկիձեն «աջակցության լուրջ ազդանշան» անվանեց նախագահական ընտրություններից մի քանի օր առաջ Լեհաստանի և Շվեդիայի արտաքին գործերի նախարարների այցը Վրաստան: «Մեկ ամիս հետո մենք կնեկնենք Վիլնյուսի գազաթափող՝ ասոցի-

ացման համաձայնագրի նախատորագրման համար: Այս երկու նախարարներն ա մ ձ ն ա կ ա մ ավանդ են ներդրել այն բանում, որ եվրամիության հետ ինտեգրացման տեսակետից Վրաստանը գտնվում է այս փուլում: Ընտրություններից մի քանի օր առաջ նրանց այցն աջակցության շատ լուրջ ազդանշան է»,- հայտարարեց Փանջիկիձեն:

Նշենք, որ Թբիլիսի ժամանելուց անմիջապես հետո Սիկորսկին և Բիլդտը հանդիպում ունեցան Վրաստանի նախագահ Միխեյլ Սաակաշվիլու հետ՝ գործարար ընթրիքի ձեռնարկով:



ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԲԻԶՆԵՍԱԿԱՆ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆՈՒՄԻՑՑՄԵԿ ԸՆԲԱԹ ՇԵՏՈ, ԵՍ ԿԹՈՂՆԵՄ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դիր է զբաղվել քաղաքացիական սեկտորի զարգացմամբ: Ընդամենը նա խոստացավ, որ ընտրություններից մեկ շաբաթ անց կիրապարակի կառավարության նոր ղեկավարի անունը:

«Այդ փուլը կտեղի ավելի երկար՝ քսան տարի: Կարծում եմ, որ ես ֆիզիկական հնարավորություններ ունեմ դրա համար: Ես ոչ մի տեղ չեմ հեռանում, այլ անցնում եմ ավելի բարդ ասպարեզ եւ կկարողանամ անել ավելին, քան վարչապետի պաշտոնում... Մեր գլխավոր խնդիրը հասարակությունն

է, այն պետք է զարգանա... Հասարակությունը պետք է լինի եվրոպական. դա իմ երազանքն է: Ես հասարակությանը խոստացել էի, որ քաղաքականության մեջ լինելու եմ երկու-երեք տարի եւ, կարծում եմ, որ դա իմ մոտ արդյունավետ ստացվեց»,- հայտարարեց Իվանիշվիլին:

ԳՈՐԾԱԴԻՐ-ՕՐԵՆԱԳԻՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՆԿԱՆ ՄԵԾԱՄԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

«Նման հանդիպումն անհրաժեշտ էր ինչպես վարչապետի, այնպես էլ մեծամասնականներիս համար: Այս հանդիպմանը մենք ընտրությունները, սահմանադրական փոփոխությունները չենք քննարկել: Հիմնականում խոսել ենք մեր շրջանների անհանգստացնող հիմնախնդիրների եւ դրանց կարգավորման ուղիների մասին»,- ասաց Հենցել Մկոյանը:

Հիշեցնենք, որ խորհրդարանական ընտրություններից անցած մեկ տարում «Ազգայինների» խմբակցությունից հեռացել են մեծամասնական 13 պատգամավորներ, որոնցից 12-ը գործում են անկախ պատգամավորի վիճակով: Մի խմբակցության մեջ միավորվել են Հենցել Մկոյանը, Կախա Օբ-

րիաշվիլին, Գիրգի Գոգալիշվիլին, Գոդերծի Բուքիան, Սերգո Խաբուլիանին, Գոգի Լիպարտեիանին: Դեռեւս որպես զուտ անկախ պատգամավորներ շարունակում են գործել Լաշա Շերվաշիձեն, Գոչա Ենուքիձեն, Մարիկա Բերուաշվիլին, Գուրամ Միսաբիշվիլին, Գիրգի Փեթրիշվիլին և Անգոր Բուքվաձեն:

Անկախ կարգավիճակով գործող պատգամավորների հետ խորհրդարանական մեծամասնության համագործակցությունն արտակարգ նշանակալիք է, առավել եւս, երբ խոսքը վերաբերում է սահմանադրական փոփոխությունների ընդունմանը: Վարչապետի հետ մեծամասնականների հետ հանդիպմանը ներկա էր նաև խորհրդարանական մեծամասնության լիդեր Դավիթ Սազանելիձեն:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՊԱՎԻԹ ՄԵՐԳԵՅՆԵԿՈ. «ԿՈՒՏԱԿՄԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ԿԱՌՆՉՎԻ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ»

Վրաստանի կառավարությունը քննարկում է կուտակման կենսաթոշակի համակարգի ներդրման հարցը:



Կառավարության նիստի սկզբում Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Մերգեյնեկոն հայտարարեց, որ նոր համակարգը կառնչվի բոլոր քաղաքացիներին: Նրա խոսքերով, նախագծի շուրջ

աշխատանքներն սկսվել են 2012 թվականի վերջին և իրականացվում են համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ: Քննարկվում է երկու հիմնական տարբերակ: Տվյալ կենսաթոշակների էությունը կայանում է նրանում, որ ցանկացած քաղաքացի իր աշխատանքի ընթացքում առանձնաց-

նում է եկամտային և ավտորիզացված գումար կենսաթոշակային հիմնադրամի համար, ինչը նրա համար կդառնա երաշխավորված կենսաթոշակ»,- ընդգծեց նախարարը:

Ինչ վերաբերում է գործազրկության հարցին, ապա նրա խոսքերով, տվյալ թեման վերլուծվում է և կուտակման կենսաթոշակի իմաստը նրանում է կայանում է նաև, որ հարուստները կարողանան օգնել աղքատներին:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՓՈԽՎՈՒՄ Է

Գյուղական բժիշկների կարգավիճակը փոխվում է, եւ նրանք ստիպված չեն լինի գնել դեղորայքը, կատարել այլ ծախսեր: Այդ մասին հայտարարեց Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Մերգեյնեկոն:

«Գյուղական բժիշկների կապակցությամբ մենք մշակել ենք նախագիծ, որի իրականացման դեպքում նրանց կտրվի նոր կարգավիճակ: Այսօր գյուղական բժիշկները մասնավոր անձինք են, չեն հանդիսանում գյուղական ամբուլատորիաների աշխատակիցներ: Ավելին, առանձին գյուղական ամբուլատորիա-

ները հայտնի չէ՝ իրավաբանական ինչ կարգավիճակ ունեն: Գյուղական բժիշկների կեսը ֆինանսավորումն ստանում է պետությունից, իսկ մի մասը՝ մասնավոր ապահովագրական ընկերություններից: Այդ աշխատավարձի շրջանակներում նրանք պարտավոր են վճարել այն շինության կոմունալ ծախսերը, որտեղ ընդունում են հիվանդներին, գնել գրեմական պիտույքներ, կատարել այլ ծախսեր: Մեր մոդելի ներդրման դեպքում կպահպանվի նրանց ներկայիս աշխատավարձը՝ 500 լարի, կավելացվի առնվազն 30 տոկոսով և նրանք ստիպված չեն լինի կատարել վերոնշյալ ծախսերը»,- ընդգծեց Դավիթ Մերգեյնեկոն:

Ծարաթից շարաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԻՐԱՎԱԿԱՆ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Վրաստանի գլխավոր դատախազությունն անցկացրեց գերատեսչության բարեփոխման, հիմնական առաջնահերթությունների, ծագած մարտահրավերների եւ առաջիկա ծրագրերի շնորհանդեսը:




«Ռեդիսոն» հյուրանոցում անցկացված շնորհանդեսին, որը վարում էր Վրաստանի գլխավոր դատախազ Արչիլ Կեիլաշվիլին, մասնակցեցին վարչապետ Բիծինա Իվանիշվիլին եւ խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին: Ինչպես նշեց գլխավոր դատախազը, ներկայացվեցին դատախազության ոլորտում իրականացվելիք նորամուծությունները, որոնց նպատակն է համակարգում ներդնել այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են թափանցիկությունը, օբյեկտի-

վությունը եւ արհեստավարժությունը: Նրա խոսքերով, նորամուծություններն են մի շարք ուղղություններ: Դա վերլուծական գործառնություն է, նորարարական նախագծերը, մարդկային ռեսուրսների կառավարման արդի պրակտիկայի ներդրումը եւ դատախազների արհեստավարժության զարգացման ծրագիրը: Ներկայացվեց նաեւ հասարակու-

թյան հետ հաղորդակցման կարգավորման համակարգը:

Շնորհանդեսին ներկա էին նաեւ խորհրդարանի պատգամավորներ, ոչ կառավարական հատվածի եւ դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ:



ՄԻՆԵԼ ՍԱԱԿԱՇՎԻԼԻՆ ՆՈՐ ՏՈՒՆ Ե ՏԵՂՎՓՈՒՎՈՒՄ

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին, իր նախագահական լիազորությունների ժամկետը լրանալու առնչությամբ, ձեռնամուխ է եղել այն բնակտարածքի ազատմանը, որի համար վճարում էր պետությունը: Վերջին տարիներին Միխեիլ Սաակաշվիլին ընտանիքի հետ պետության հաշվին ապրում էր Թբիլիսիի ժայռամասի Դիդի Դիդումի շրջանի մասնավոր տներից մեկում: Հոկտեմբերի 23-ին Սաակաշվիլին ընտանիքի անդամների հետ ձեռնամուխ է եղել իրերի հավաքմանը՝ տեղափոխվելու բնակության նոր վայր, որը գտնվում է մայրաքաղաքի կենտրոնում՝ Բառնուկի փողոցում: Վրաստանի ներկայիս նախագահի ընտանիքը պետական տունը կազատի մի քանի օրից:

ՆԵՐԿԱՑԱՑՎԵՑԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Վրաստանի ներքին գործերի նախարար Իրակլի Դարիբաշվիլին, հոկտեմբերի 24-ին անցկացված ուժային այդ գերատեսչության բարեփոխումների նախագծի շնորհանդեսին, հայտարարեց, որ 2012 թվականի նոյեմբերին վերացվել էին սահմանադրական անվտանգության դեպարտամենտը եւ հատուկ օպերատիվ դեպարտամենտը:

Նրա խոսքերով, վերջիններիս բազայի վրա ստեղծվել են հակակոռուպցիոն գոծակալություն եւ պետական անվտանգության գործակալություն: Ինչպես նշեց նախարարը, հակակոռուպցիոն գործակալությունը բացահայտում է հանրային ծառայություններում շահերի անհամատեղության փաստերը: «Այն պայքա-

րում է կոռուպցիոն դրսևորումների դեմ, իսկ պետական անվտանգության գործակալությունը ապահովում է հնարավոր սպառնալիքների վերլուծությունը, որոնք ուղղված են պետության դեմ եւ զբաղվում է երկրում սահմանադրական կարգի պաշտպանությամբ»,- նշեց Իրակլի Դարիբաշվիլին:

ՖԻՆԱՆՍԵՐ

ՊԵՏՐՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՎԵՐԱԴԱՐՁՎԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Վրաստանի խորհրդարանի կոմիտեներում լուսնների անցկացումից հետո Վրաստանի 2014 թվականի պետությունի նախագիծը, դիտողություններով եւ առաջարկություններով վերանշակման համար վերադարձվել է կառավարությանը:

Պետությունի վերջնական տարբերակը պետք է օրենսդիր բարձրագույն մարմնի քննարկմանը ներկայացվի նոյեմբերի 5-ին, որից հետո այն կորվի լիազուամար միստի օրակարգում:

վել խորհրդարանական փոքրամասնությանը, որը սխալ է համարում բյուջեի հիմնական առաջնահերթությունների հաշվարկումը: Ավելին, փոքրամասնության պատգամավորներն ի նշան բողոքի, հոկտեմբերի 18-ին հեռացան ֆինանսների նախարարի հետ հանդիպումից:

Իր հերթին, ֆինանսների նախարար Նոդար Խաղոբիձե գտնում է, որ «Ազգայինների» պատգամավորները հանդիպումից հեռացան, քանզի իրատեսական փաստարկներ չունեին եւ նրանց բողոքներն անհիմն էին: Նոդար Խաղոբիձե անդրադարձավ նաեւ կուտակումային կենսաթոշակի հարցին: Նրա խոսքերով, դա երկարաժամկետ գործընթաց է, որը, սակայն, անհրաժեշտ է իրականացնել:

ՎՐԱՑԻ ԽԱՂԱՂԱՊԱՅՆԵՐՆ ԱՐԴԵՆ ԿԱՏԱՐԵԼ ԵՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Աֆղանստանում վրացի խաղաղապահներն արդեն քվեարկել են Վրաստանի նախագահական ընտրություններում: Ընտրատեղամասերը գտնվել են վրացական եւ ամերիկյան բազաներում՝ աֆղանական Գիլմենդ նահանգում, հաղորդում է երկրի պաշտպանության նախարարությունը: Մասնավորապես, վրացի զինծառայողները քվեարկել են «Լեզերմիկ» եւ «Էրեդվի» բազաներում գտնվող ընտրատեղամասերում: Բացի այդ, քվեարկության համար օգտագործվել է երկու շարժական քվեատուփ:

Ընտրություններին մասնակցել է ավելի քան 1500 զինծառայող: Քվեարկության ընթացքին հետեւել են վրացական տարբեր կուսակցությունների եւ «Արդար ընտրություններ» հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ԿՐԹԱԿԱՆ

ԻՆԿԼՅՈՒՋԻՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՋՆԱՇԵՐԹՈՒԹՅՈՒՆՆ Ե

«Ինկլյուզիվ կրթությունը հանդիսանում է կրթական համակարգի առաջնահերթությունը»,- այդ մասին մամուլ առուխուսում հայտարարեց Վրաստանի կրթության եւ կրթության նախարար Թամար Սանիկիձե՛ն՝ նշելով, որ այդ ուղղությամբ մշակվել է երկարաժամկետ ռազմավարություն:

«Այդ ռազմավարության համաձայն, երկու հանրային դպրոցներում հիմնվել են ինտեգրման դասարաններ անուղիկ սպեկտրի երեխաների համար, ինչը կարելու է մշակություն ունի»,- հայտարարեց նախարարը:

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Ե ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը հոկտեմբերի 28-ից սկսում է հանրային դպրոցների տնօրենների հավաստագրման երկրորդ փուլը:

Հարցազրույցներ կանցկացվեն այն թեկնածուների հետ, ովքեր հաջողությամբ անցել են թեստավորման առաջին փուլը: Նախարարության տվյալներով, հարցազրույցի նպատակն է ընտրել հանրային դպրոցների տնօրենների պաշտոնում բարձր որա-

կավորված կադրեր: Նախարարությունը վստահեցնում է, որ լրիվությամբ կապահովվի հարցազրույցի գործընթացի թափանցիկությունը, ինչպես նաեւ բոլոր թեկնածուների համար կստեղծվեն հավասար պայմաններ:

Թեստավորման փուլն անցած թեկնածուների հետ հարցազրույցների ժամանակացույցը կիրառարակվի ավելի ուշ:



ՍԿԱՎԵՑ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Հոկտեմբերի 21-ից այն դիմորդներին, ովքեր 2013 թվականի միասնական ազգային քննությունները հաղթահարել են նվազագույն իմացության մա-

կարդակը, սակայն չեն ընդունվել ոչ մի բուհ, տրվում է կրկնական ընդունելությանը մասնակցելու հնարավորություն: Ցանկացողների գրանցումը

կշարունակվի մինչեւ նոյեմբերի 3-ը: Դիմորդները կարող են գրանցվել կրթության նախարարության պաշտոնական կայքէջում: Գրանցման համար անհրաժեշտ է ներկայացնել անձնական վկայականը եւ այն բացառիկ կողմ, որը դիմորդներին տրվել էր միասնական քննությունների ժամանակ:

ՎՐԱՍԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԻ ՄԵՋ Ե ՄՏԵԼ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԱՅՑԵԳՐԵՐԻ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

2013 թվականի հոկտեմբերի 18-ից ուժի մեջ է մտել Եվրամիության նոր կարգավորումը, որը սահմանում է կարճաժամկետ այցեգրերի (180 օրերից 90 օրվամբ) առկայության դեպքում Եվրամիության տարածքում գտնվելու ժամկետը:

Վրաստանի ԱԳ նախարարության տեղեկատվությամբ, մինչ այդ շենգենյան գոտում վեց ամիսներից հնարավոր էր գտնվել 90 օրվա ընթացքում եւ այդ վեց ամիսների հաշվարկը սկսվում էր շենգենյան գո-

տու ցանկացած երկիր մուտք գործելու առաջին օրվանից: Իսկ հիմա հաշվարկի կարգը փոխվում է: Այսուհետեւ շենգենյան գոտում գտնվելու առավելագույն ժամկետը կկազմի 90 օր՝ սահմանված 180 օրե-

րից, այսինքն՝ սահմանագծում կստուգվի միայն, թե երբ է քաղաքացին մուտք գործել Եվրամիության տարածք եւ նրան կորվի լրացուցիչ օրերը 90 օրվա հաշվարկում ընդգրկելու իրավունքը:

Կարգավորման մասին մանրամասն տեղեկատվություն հնարավոր է ստանալ http://ec.europa.eu/dgs/home-affairs/what-we-do/policies/borders-and-visas/index_en.htm:

2014-ԻՆ ՎՐԱՍԱՆԸ ԶԻ ԴԱՌՆԱ ՆԱՏՕ-Ի ԱՆԴԱՄ

Վրաստանը 2014 թվականին չի դառնա ՆԱՏՕ-ի անդամ: Այդ մասին հոկտեմբերի 22-ին Բրյուսելում հայտնել է Հյուսիսատլանտյան դաշինքի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոզ Ռասմուսենը: «Վրաստանի նոր կառավարությունը հավաստել է ՆԱՏՕ-ին անդամակցվելու մտադրությունը: Բայց դա հաստատ տեղի չի ունենա հաջորդ տարի, առայժմ մենք կհամագործակցենք Վրաստան-ՆԱՏՕ խորհրդի շրջանակներում»,- հայտարարեց նա:

Ռասմուսենը հիշեցրել է, որ Բուխարեստի 2008 թվականի գագաթաժողովում թե՛ Վրաստանը, թե՛ Ուկրաինան հանդես եկան դաշինքին անդամագրվելու օգտին: «Սակայն Ուկրաինան որոշեց չչարունակել դաշինքին անդամագրվելու քաղաքականությունը: Մենք այդ երկրի հետ կհամագործակցենք Ուկրաինա-ՆԱՏՕ խորհրդի շրջանակներում»,- ասաց գլխավոր քարտուղարը:

ԱՐԴԱՐԱՑՎԵԼ Է 43 ՄԱՐԴ

Ընթացիկ տարվա անցած ինն ամիսների ընթացքում դատարանների կողմից լրիվությամբ արդարացվել է 43 մարդ:

Վրաստանի Գերագույն դատարանի կողմից հրապարակված հաշվետվության մեջ նշված է, որ կտրուկ ավելացել է չարգելափակվող պատժամիջոցների կիրարկման թիվը:

Անցած ինն ամիսների ընթացքում 10102 անձից բանտարկության պատժամիջոց է ստացել 2623-ը, ինչը կազմում է ընդհանուրի 26 տոկոսը, պայմանական պատժամիջոցով պատժվել է 6006 մարդ (59,5 տոկոս), տուգանվել է 1141 մարդ (11,3 տոկոս), հասարակական աշխատանքի է դատապարտվել 184 անձ (1,8 տոկոս):

Ինչ վերաբերում է արդարացման որոշումներին, ապա նման որոշում է ընդունվել 43 անձի նկատմամբ: Մասնակիորեն արդարացված որոշում է ընդունվել 28-ի նկատմամբ, իսկ 473-ի նկատմամբ գործը դադարեցվել է:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ՝ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԻՐՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԿԱՐԾՈՒՄ ԵՄ, ԿՍՏԱՆԱՄ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԶԱՅՆԵՐԻ 70-75 ՏՈԿՈՍԸ»



«Ես կարծում եմ, որ կստանամ ընտրողների ձայների 70-75 տոկոսը»,- հայտարարել է «Վրացական երազանք» կուլիցիայից Վրաստանի նախագահի թեկնածու Գիրգի Մարգվելաշվիլին «Կվիրիս Պախորա» թերթին տված հարցազրույցում: Նրա խոսքով, գործնականում, նաեւ տեսակարար են, հնարավոր չէ պատկերացնել, թե Վրաստանը ցանկանում է Սասկաշվիլու ռեժիմի վերադարձը: «Հետեւաբար, երբ մեզ հարցնում են կլիմի երկրորդ տուրը, թե ոչ, պատասխանը միանշանակ է՝ եթե մենք այդքան միասնակցում ենք զնախատման հարցում, եթե ես եւ Բիժինա Իվանիշվիլին այնպես մոլորված ենք այն բանում, որ մեզ աջակցում է ընտրողների մեծամասնությունը, այդ դեպքում մենք նաեւ ճիշտ չենք նախանշել երկրի բարեփոխումները եւ զարգացումը: Եթե հոկտեմբերի 27-ին մեր կողմնակիցների մեծ մասը եւ նրանք, ովքեր աջակցում են ընդդիմադիրներին, մասնակցեն ընտրություններին, ես կարծում եմ, որ կստանամ ընտրողների ձայների 70-75 տոկոսը»,- նշեց Գիրգի Մարգվելաշվիլին:

ԴԱՎԻԹ ԲԱՔՐԱՁԵ. «ԵՎԵՔ ՄԻԱՍԻՆ ՎԵՐԱՀԱՅԵՆՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ»



«Միասնական ազգային շարժում» կուսակցությունից նախագահության թեկնածու Դավիթ Բաքրաձեն, իր քարոզարշավներում հիմնական շեշտը դնում է գործադիր մարմնի գործունեության վերահսկման անհրաժեշտության վրա: Մասնավորապես, Ախալցխայի նախընտրական հանդիպման ժամանակ «Ազգայիններ» նախագահության թեկնածու հայտարարեց. «Նախագահի գլխավոր գործառնությունը պետք է լինի վերահսկողությունը կառավարության գործունեության նկատմամբ: Իսկ առանց միասնական հասարակության ստեղծման, դա անհնարին է իրականացնել, ուստի եւ ընդդիմադիր ճակատը ներկայացնող թեկնածուի ընտրությամբ հնարավոր կլինի հասնել հասարակության միասնությանը եւ դա էլ նորընտիր նախագահին թույլ կտա արդյունավետորեն իրականացնել իշխանության ճյուղերի միջեւ հավասարակշռության հաստատման սահմանադրական երաշխիքի իր առաքելությունը»,- հայտարարեց Դավիթ Բաքրաձեն:

ՆԻՆՈ ԲՈՒՐՋԱՆԱՁԵ. «ԱՌԱՆՅՈՂ-Ի ՇԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ԼՈՒԾԵՆ»



«Ժողովրդավարական շարժում» միասնական Վրաստանի» նախագահության թեկնածու Նինո Բուրջանաձեն այն կարծիքին է, որ «ներկա փուլում Վրաստանը ՆԱՏՕ-ին անդամագրվելու ոչ մի հնարավորություն չունի»: Այդ մասին նա հայտարարել է Վրաստանի հանրային հեռուստատեսության եթերում: Նինո Բուրջանաձեն նշեց, որ «այնքան ժամանակ, քանի դեռ Վրաստանի տարածքում գտնվում են ռուսական զորքեր, չի կարող դաշինքին երկրի անդամակցության հարցի լուրջ քննարկում լինել»: «Ի տարբերություն վրաց բազմաթիվ այլ քաղաքական գործիչների, ովքեր ասում են, թե Վրաստանը շուտով կարող է ընդունվել ՆԱՏՕ, ես ուղղակիորեն հայտարարում եմ, որ ոչ 2014 թվականին, ոչ 2015-ին մեր երկիրը դաշինքին անդամակցվելու հնարավորություններ չունի»,- ասաց նա: Բուրջանաձեն նշել է նաեւ, որ «առանց ՌԴ-ի հետ հարաբերությունների կարգավորման հնարավոր չէ լուծել Վրաստանի գլխավոր հիմնախնդիրները»: «Ես պատրաստ եմ Ռուսաստանի հետ ընդգրկուն երկխոսություն սկսել բոլոր խնդրահարույց հարցերի շուրջ: Կստանամ, որ մասնակցությունը ընթացքում հնարավոր է բոլոր հիմնախնդիրների փոխհավասարակշռումը, ներառյալ Վրաստանից ռուսական զորքերի դուրսբերման հարցը»,- բնորոշեց նա:

ՆՈՐ ՆԱԽԱԳԱՐ, ՆՈՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

(Սկզբը՝ 1-ին էջում)

վարական շարժում՝ միասնական Վրաստանի» թեկնածու, Վրաստանի խորհրդարանի նախկին նախագահ, ժամանակակից երկու անգամ երկրի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար, 49-ամյա Նինո Բուրջանաձենին: Թեպետ ընտրություններին մասնակցում են նաեւ հասարակության հայտնի գործիչներ, մասնավորապես, Քրիստոնեա-ժողովրդավարական շարժման լիդեր, լրագրող Գիրգի Թարգամաձեն, ԿԸՀ-ի նախկին նախագահ Զուրաբ Խարաթիշվիլին, Լեյբորիստական կուսակցության նախագահ Շալվա Նաթելաշվիլին, փաստաբան Քարթլոս Դարիբաշվիլին, կոմկուսի կենտրոնի նախկին առաջին քարտուղար Ավթանդիլ Մարգիանին, Նեստան Կիրթաձեն, Կոբա Դավիթաշվիլին, Սերգո Զավախաձեն եւ ուրիշներ:

նը կարելի է համարել այն հանգամանքը, որ 2013 թվականի հոկտեմբերի 27-ի ընտրությունների արդյունքներով ընտրված վրաստանի չորրորդ նախագահը երկրի քաղաքական կյանքում իր տեղն զբաղեցնելու է նշանակալիորեն սահմանափակված իրավասություններով ու նոր առաքելությամբ:

Երկրի Սահմանադրությունում կատարված փոփոխությունների համաձայն, նոր նախագահի իրավասությունների մեջ մտնում են պարզեցնելու մեթոդները, ներման եւ քաղաքացիության շնորհման հարցերը: Նախագահի գլխավոր գործառնություններից է մնում ճգնաժամային իրավիճակներում խորհրդարանը ցրելու եւ արտակարգ դրությունում հայտարարելու իրավունքը, այսինքն որպես գլխավոր հրամանատար, զինված ուժերի օգտագործման իրավունքը:

Նախագահական ընտրություններից մեկ օր շուտ, նորընտիր նախագահի իրավասությունների հստակեցման նպատակով մենք դիմեցինք Վրաստանի խորհրդարանի իրավաբանական կոմիտեի նախագահ, ճանաչված սահմանադրագետ Վախթանգ Խանաձեին:

- **Քատոն Կախթանգ, Սահմանադրությունում կատարված փոփոխությունները չափազանց կրճատում են նորընտիր նախագահի լիազորությունները: Մասնավորապես, ո՞ր բնագավառներում են արտահայտվում այդ սահմանափակումները:**

- Նախ կցանկանայի ասել, որ երկրի կառավարման մեր ընդունած մոդելը, անճշան տարբերություններով, գործում է եվրոպական գրեթե բոլոր երկրներում: Մինչ այդ, այն անսահմանափակ իրավասությունները, որոնցով Սահմանադրությունը լիազորել էր Վրաստանի նախագահին, հանգեցնում էին հենց այդ սահմանադրական սկզբունքների կոպիտ խախտման: Փոփոխությունները թույլ են տալիս աստիճանաբար վերականգնելու այդ սկզբունքները: Ամենայն հավանականությամբ, Սահմանադրությունը առաջիկայում կրկին կկարգավորվի, քանի որ ներկա դրությամբ էլ այն լրիվությամբ չի ազատված սկզբունքային սխալ դրույթներից: Օրինակ, վերցնենք կառավարության կազմավորման կարգը, որը ներառում է մի շարք միմյանց բացառող դրույթներ: Հիմա կոմկուտե հարցով: Սահմանադրա-

կան փոփոխության համաձայն, նախագահից հանվում է գործադիր գործառնությունը եւ կառավարության գործունեությունում միջամտելու իրավունքը: Դա նշանակում է, որ այսուհետեւ գործադիր իշխանությունը լրիվությամբ վերապահվում է կառավարությանը, հետեւաբար, դրա արդյունքների համար էլ պատասխանատվությունը լրիվությամբ դրվում է կառավարության վրա:

Սահմանափակում է նաեւ նախագահի դերը արտաքին քաղաքական կուրսի կանխագծման եւ իրականացման գործում: Իսկ դա նշանակում է, որ նախագահը, առանց կառավարության համաձայնության, իրավասու չէ անցկացնել բանակցություններ, ստորագրել միջազգային պայմանագրեր եւ այլն:

- **Սահմանադրական փոփոխություններն ինչպե՞ս են առնչվում ներքաղաքական ոլորտում նախագահի իրավասություններին:**

- Ներքաղաքական ոլորտում, սահմանադրական փոփոխությունների կիրարկումից հետո նախագահը, բացառությամբ զինված ուժերին վերաբերող իրամասնագրերի, մյուս կարգադրությունները համաձայնեցնելու է վարչապետի հետ: Սահմանափակվում են նախագահի իրավունքները ազգային կարգավորման հանձնաժողովների եւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների նշանակման հարցում: Նախագահի իրավունքների սահմանափակումը անդրադարձնում է նաեւ ազգային անվտանգության խորհրդի գործունեության վրա, որի գլուխը նախագահն է: Այդ առումով խորհուրդը զբաղվելու է միայն ռազմական հարցերով:

- **Իսկ ի՞նչ կասե՞ք Սահմանադրության մասին նախագահի վերապահվող իրա-**

վասությունների մասին:

- Ամենակարեւոր իրավասությունը, որը վերապահվում է նախագահին, դա առնչվում է ճգնաժամային իրավիճակներում արտակարգ կամ պատերազմական վիճակի հռչակման իրավունքին, այսինքն՝ որպես գլխավոր հրամանատար իրավասու է օգտվելու զինված ուժերի օգտագործման իրավունքից: Նախագահն իրավասու է նաեւ ճգնաժամային իրավիճակում ցրելու խորհրդարանը եւ նշանակելու խորհրդարանական նոր ընտրություններ:

Վրաստանի նորընտիր նախագահին վերապահվում է պարզեցնելու, ներման ու քաղաքացիության շնորհման հետ կապված հարցերի լուծումը: Բացի այդ, նախագահն է խորհրդարանին ներկայացնելու վարչապետի թեկնածությունը, թեպետ զրկվում է վերջինիս միանձնյա նշանակման մինչ այդ ունեցած իրավունքից: Եթե խորհրդարանը հավանություն չի տալիս նախագահի առաջարկած վարչապետի թեկնածությունը, ապա սահմանադրական փոփոխություններով խորհրդարանն իրավասու է, առանց նախագահի հետ համաձայնեցման, ընտրելու վարչապետին:

Վերջում ավելացնենք, որ մինչ այդ անկախ պետականության պայմաններում անցկացված նախագահական հինգ ընտրությունները ավարտվել են մեկ տուրով: 1991թ. կայացած առաջին ընտրություններում հաղթեց Զվիադ Գամսախուրիան՝ ստանալով քվեների 88 տոկոսը: 1995-ին կայացած ընտրություններում քվեների 77 տոկոսով հաղթեց Էդուարդ Շեարղանաձեն, 2000թ. նախագահական ընտրություններում էլ հաղթեց Շեարղանաձեն՝ ստանալով քվեների 82 տոկոսը: 2004-ին կայացած վաղաժամկետ ընտրություններում քվեների 96 տոկոսով հաղթեց Սիլվեստր Սասկաշվիլին: Եթե այս ընտրությունները համարվեցին ազատ եւ արդար, ապա Սասկաշվիլու երկրորդ ընտրությունը 2008-ին կասկածի տեղիք տվեց: Այսպիսով, վաղը՝ հոկտեմբերի 27-ին, Վրաստանը կընտրի թվով չորրորդ նախագահին, նոր լիազորություններով եւ նոր առաքելությամբ:

ՅՈՒՐԻ ՊՈՐՏՅԱՆ

ԴԻՏՈՐՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ԱՎԱՐՏՎԵՑ

Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը հոկտեմբերի 18-ին ավարտեց նախագահական ընտրությունների տեղական դիտորդների գրանցումը: Հոկտեմբերի 27-ին Վրաստանի ողջ տարածքով ընտրություններին դիտորդի կարգավիճակով կհետեւեն 57 տեղական եւ 55 միջազգային կազմակերպություններ: Միջազգային կազմակերպությունների թվին են պատկանում ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամը, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական ասամբլեան, ՆԱՏՕ-ի խորհրդարանական ասամբլեան, ԱՄՆ-ի միջազգային հանրապետական ինստիտուտը: Նախագահական ընտրությունները կլուսաբանեն 84 տեղական եւ 35 արտասահմանյան լրատվամիջոցներ: